

Ժողովրդի Բարեկամները

Դոկտոր փաշայեան խան, տրամ մը շինեց, ժողովրդի յարեկամները՝ Կոպտակն որոշ է և պայծառ. զգացումներն առողջ, հայրենասիրական են:

Դոկտոր փաշայեան խան՝ ներկայ գործով կը ներկայանայ մեզ թատերադրի քաջ տաղանդով մը:

Գործողութիւնը (սմ. սահմանադրութեան է առաջ է. Բալու գաւառին մէջ, — Երկու նշանաւոր ընտանիքներ խաչոյենց և Պեւտոյենց, տասը տարիէ ի վեր առուի մը համար դատի մէջ են: Երկուքն ալ կառավարութեան հետզհետէ կերցուցած կաշառքներով՝ կործանման կէտին հասած են:

Ասոր հակառակ՝ խաչոյենց դուստրը Մարոն՝ սիրային ջերմ զգացմամբ մը կապուած է Պեւտոյենց Ալանին հետ:

Նոր հասած Յովհաննէս է ք. փաստաբանը, զաւառի ուսուցիչ՝ Նշանին և Վանեան բժշկին օգնութեամբ՝ վերջ կը դնէ այդ փուռ և կործանող կոռւին, և բարեկամական կապերն ամուր և տեւական ընելու համար՝ կ'որոշեն Մարոն ու Ալանը կարգել: — Գիշեր ատեն Հիւսէին բէգի մարդիկը խաչոյի տունը մտնելով կը սպաննեն խաչոն ու կիներ, և Մարոն կը փախցնեն: Կառավարութիւնը Պեւտոն կը ձերբակալէ իբր այդ գործին հեղինակ և կը բանտարկէ զայն, պահանջելով ընտանիքէն մեծ գումար մը զինքն ազատ ձգելու համար: — Փաստաբանը (որ արդէն

ուրիշ շատ բարիքներ կը գործէ ձրի) դատարանի ձեռքով կ'ազատէ Պեւտոն, իր տեղը բանտարկել տալով մի քանի քողեր: Յետոյ մեծ պատրաստութեամբ կ'ազատեն Մարոն. և թէպէտ կոռուին մէջ Յովհաննէս էֆէնտի փաստաբանը ծանրապէս վիրաւորուած է, բայց վախնալով որ զուցէ մեռնելով՝ չտեսնէ Ալանին և Մարոյին հարանիքը, իր առջևը պսակել կու տայ:

Ալան և ուրիշներ բռնուած են կառավարութեան, թուրք պաշտօնեաներ կը շարշրկեն զանոնք, Պեւտոն, բժիշկը և փաստաբանը երեք խմբի բաժնուած՝ կը յարձակին բանտին վրայ և ուրիշ տեղեր. Մարոն ալ առնացի հազուատով և զինուած, ամուսինը ազատելու կ'երթայ: Խիստ է կռիւր և դժուար, բայց յաղթանակն իրենցն է: Յովհաննէս փաստաբանը ծանր վիրաւորուած կը մեռնի, Հոտ, աղբիւրի մօտ՝ թփին քով կը թաղեն: Ուսուցչի ճառը, Բամ փորձառուր և հրացանի հարուածները վերջի հրաժեշտի ողջոյնները կ'ըլլան այդ վեհանձն ու ազնիւ հոգւոյն:

Ահա դրամային համառոտութիւնը, որ և ոչ իսկ կարելի է ամբողջական գործին հետ բաղդատել: Հեղինակն այնպիսի վարպետութեամբ զարդարած է զայն, այնքան համեղ երկրորդական դէպքերով, որ կարելի չէ համառոտել: Համառոտելը՝ հոս սպաննել է այդ սիրուն գործը: Կարգալով և կամ ներկայացումը տեսնելով միայն կարելի է իսկութեամբ ըմբռնել:

Հեղինակը՝ միջավայրը, սովորութիւնները լաւ ուսումնասիրած է: Անձերը կատարեալ հոգի ունին, կ'ապրին, մեր ընկերներն են. ամէն օր կը տեսնենք զանոնք: Թոսակցութիւնները տաք ու աշխոյժ են, ստէպ խիստ բնական:

1. Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու 1910:

Երեք վեհաճառ հոգիներ են. առաջինը, բովիշկն ու փաստաբանը, ժողովուրդի բարւոյն նուիրուած, քաղցին հանգստութիւնն ու զուարճութիւնները թողած, հոս գաւառի մէջ ինկած են՝ կրթելու, բարձրացնելու համար ժողովուրդը: Այս է իրենց գաղափարականը:

Ժողովուրդը՝ հիւժած, մարտիրոսացած՝ անարգար, անգութ պաշտօնեաներու ձեռքէն, կ'ըմբռնէ իր իսկական բարեկամները, կը յուզուի, կ'իւրացնէ վսեմ գաղափարները, և մի քանի տարուան մէջ գաւառը կը փոխուի, կը նորնայ: Բայց հազիր վայելու առնեն է, ահա նորէն թուրքն է որ կը խլէ և կը թողու ժիր ու աշխատող Հայուն թշուառութիւնն ու ամօթ:

Անիրաւ պաշտօնեայները, հայ գեղջուկը ամենաճիշտ գծուած են. իրենց հոգեբանութիւնն այնքան լաւ ըմբռնած է Դոկտոր փաշայեան խան, այնքան մանրամասն ու սուսնասիրած է հայուն դժբաղդ վիճակը, որ երբեմն ամէն ինչ ըսելու համար՝ աւելորդ տեղ, զրտէ դուրս խօսակցութիւններով գործը կ'երկարէ:

Դոկտոր փաշայեան խանի այդ գործը կրնանք եզական ըսել: Կարելի է ոմանք նմանողութիւններ գտնեն ուրիշ գործերու. ինչպէս Մարոյի և Ալուանի սէրը հակառակ իրենց ծնողացը թշնամանքին՝ Շէքսպիրի Ռոմէոյ և Ժիլիէրին, և կամ Ժիրովմոյ Ռովենթայի Ռոմանթիկիսմոյ, Շիլլերի Վիլհելմ Տէյէն տեսիլներ յիշեն. են:

Բայց ես համոզուած եմ՝ որ Դոկտոր փաշայեան խանի ժողովրդի Ռարեկամներն անկասկա՛ն երկ մ'է և ոչ հետեւողութիւն: Հեղինակը կը պատմէ, կը ներկայացնէ ճշմարիտ ապրուած վիճակ մը, կեանք մը, միջավայր մը:

Հաւմբռնած թատրերգութեան արուեստը, իւր անձերը պարապ տեղ չեն շրջիր: Ամէն ոք իր պաշտօնն ունի, և ուշադրութեամբ ամէն անձի դերին վրայ աշխատուած է: Փափաքելի էր միայն՝ որ աբարուածնէ արարուած շատ մեծ հետաւորութիւն չըլլար: Ինչպէս առաջինէն երկրորդը երեք տարի: Ժիշտ է՝ որ հեղի-

նակն ուզած է նոյն ժամանակամիջոցին մէջ ընտանեկան միջավայրին այլասերումը, փոփոխութիւնները ցուցնել: Բայց չէր արժեք՝ այդ միայն ցուցնելու համար երեք տարի տարբերութիւն մը դնել:

Արդի թատրերգութիւնը խոյս կու տայ ո՛ր է մենախօսութենէ: Դոկտոր փաշայեան խան նկատի չէ առած այդ. բեմին վրայ իր անձերը ստէպ առանձին կը մնան, առանձին կը խօսին և զգացումներ կը յայտնեն: Ըստ իս հանդիսատեսը՝ եղելութեան յառաջխաղացութենէն, ինքնին պէտք է կազմէ իւրաքանչիւրին զգացումները:

Գործն է որ պիտի խօսի հանդիսատեսին: Ստէպ թատրերգութիւնը, նա մանաւանդ այսպիսի ընտանեկան կեանք մը ներկայացնող գործ մը, շատ կը կորսնցունէ բնականութենէն՝ երբ բեմէն անձ մը՝ առանձին գաղափար կը յայտնէ հանդիսատեսին:

Արդի մեծ թատրագիրներու գործերուն մէջ չենք գտներ մենախօսութիւն, և կամ խիստ քիչ բացառութեամբ:

Բեմին վրայի անձը պէտք է միշտ բեմին առձի մը խօսի և ոչ թէ հանդիսատեսին. իբր թէ հոգ հանդիսատես չըլլար. մինչդեռ հին գործերուն մէջ ստէպ կը տեսնենք որ դերասան մը յանկարծակի ցած ձայնով՝ զաղանիք մը, զաղափար մը կը յայտնէ հանդիսատեսին: Ընտանեկան չէ այդ, հետեւաբար և ոչ իսկ գեղեցիկ:

Մարիոյ Նիկողեիի՝ մէջ Ռեքիֆին մէջ, վարագոյրը բացուելուն՝ դերասանը սենեակ կը մտնէ. կը քալէ, դուրս կ'ելլէ, կրկին կը մտնէ մօտ երկու վայրկեան չափ. առանց խօսելու կը նստի, գիրք մը կը սկսի կարդալ մինչև հետախօսի գանձակը, անով կը խօսի. և յետոյ կը սպասէ լուռ՝ յաջորդին զալուն: Ջի խօսիր, որովհետեւ հոտ բեմին վրայ ուրիշ անձ չկայ:

Պերսթայնի Ռաֆֆիզային վերջը՝ նոյնպէս դերասանը կը մտնէ տխուր, յուսահատ. կը հեռանայ անխօս, և դուրսէն հարուած մը կը լուռի:

Այսպէս կրնամ շատ օրինակներ բերել:

գրեթէ արդի բոլոր թատերգութիւնները: Եթէ հեղինակը ճշդելու, լուսարանելու համար պէտք զգայ առանձին խօսեցնելու անձերը, դերասանն այդ պաշտօնը պէտք է դէմքի արտայայտութիւններով ընէ, աչքով պէտք է խօսի:

Պատիկ և աննշան դիտողութիւններ են ստոնք՝ որ ժողովրդի Բարիկամներուն ո՛ր և է նսեմութիւն պիտի չկարենան բերել:

Երախտապարտ պէտք ենք ըլլալ Գոկոտ. փաշայեան խանի՝ որ լոյս ընծայեց հայրենիքի ճշմարիտ սէրէ բղխած գործ մը, կենդանի, ապրող անձերով:

ԱՐԱՄ ԳՈՒՄԱՆԻՔԱՆ

ԱՄԻՍ ՄԸ Ի ԿԻԼԻԿԻԱ

Տիկին Արշակունի Թեոդիկի

Արցունքին ակունքը՝ վիշտը կամ տառապանքը չէ՝ և արցունքն ալ վայելք մը չէ՝. հանգստութիւն մը չի՝ տար զգածուող սրտին:

Անցեալ տարի արիւնի մէջ էր Կիլիկիան, հինգ դար առաջ՝ փառքերու մէջ էր ան, և այս օր արցունքի մէջ կը տեսնենք անդ չքնաղ երկիրը՝ Տիկին Արշակունի Թէոդիկի Ամիս մը Ի Կիլիկիա հաստորիկը ձեռքերնիս:

«Ամիս մը Ի Կիլիկիա». ինչ հաճելի ճամբորդութիւն. չէ՞ որ զրագիտուն հարտասուել պիտի տայ մեզ թշուառութեանց, անլուր ոճրագործութեանց դիմաց. և ահա ճիշդ այդ արցունքն է վայելքի մը պէս արցունքը:

Տիկին Թէոդիկ՝ այսօրուան Զապէլնէն երու շարքէն էր. բայց ցարդ իր տաղանդի հետքերը լրագրաց սիւնակներու մէջ թողած էր: Մոյլ գրող մի՛է, պիտի ըսէին զինքն ընթերցողները. և ես խոհուն զրագիտուն մի՛է կ'ըսեմ, երբ ձեռքիս հաստորին ընթերցումը կ'աւարտեմ: Հատորներն են հեղինակի մը անունը անմահացնողը: Էջ մը գրուածքը կրնայ իր մէջ տաղանդ մը մատնել:

Ռուսահայ յայտնի զրագէտէ մը երբ իրեն ախորժած քսանհինգ ապրող զրագէտներու անունները ուզեցի, ան քանի մը անուններու մէջ շեշտած էր Տիգրան Կամսարականը, «Վարժապետին աղջիկը» վէպին հեղինակը:

Տարիները սահած են, Կամսարական զրական հրապարակէ քաշուած է, ու ան կ'ապրի իրաւամբ Ռուսահայ զրագէտի մը մտքին մէջ:

Հարկ է որ տիկին Թէոդիկ իւր անունը հայ զրականութեան մէջ անդեցնելու համար, զեռ ուրիշ գործ մ'ալ հրատարակէ:

«Ամիս մը Ի Կիլիկիա». մեր ամենուս սրտին ամենամօտիկ նիւթը, որ շատ հանութեամբ պիտի կարդացուի քնարական բար. հեղինակը ընթերցողին առաջնորդն է, ինքն է որ նայուածքիդ, քայլերուդ, զգացումներուդ կ'առաջնորդէ. ինքն է որ զքեզ հանդիսատես կ'ընէ խղճալի տեսարաններու:

Հոկտեմբերի մէջ ենք. հոտ, եղանակին ախրութիւնը կը զգանք նոյն իսկ այսօր յուլիսի մէջ: Ուզեկից զրագիտունին պիտի փշաքաղէ երբեմն մարմինդ, պիտի թացցնէ երբեմն աչքերդ, զթութիւնդ պիտի ուզէ դէպ ի անտէր և անպաշտպան որբիկները և այրիները. և ինքն է որ զքեզ կ'ըրէ պիտի հանէ վայրագութեանց դիմաց: Ահ, այդ զրչով նկարագրուած տեսարաններուն դիմաց արցունք և զայրոյթ պէտք է...

Տիկին Արշակունի եւ գեղեցկագէտի մը բոլոր նուրբ յատկութիւններովը կը երկկայանայ: Ոճը յստակ, կոկիկ, խնամով աշխատուած, լեզուն հեզասահ, ամէնքն ալ մարգարտաշար տողեր: Ամենագեղեցիկ և տաղանդ մը երևան հանող էջ մի՛ է «Պատկերի մը Ի տես»ը, որ անքան գեղեցիկ տողերով, կենդանի նկարագրութեամբ՝ մուշ լուսանկարի մը ամէն մանրամասնութիւնները կը ցուցնէ. և խաւարին մէջ, մինաբէլին դիմաց՝ զթութիւն հայցող «կոյր հօճան», որ ջարդի օրերուն հայ մ'ուզած էր անոր արիւնով սրբուելու և քաւուելու համար, քեզի կ'երևայ իր ներքին բոլոր